ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ 2

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: Սկսած 2019 թվականից իրականացվել են աշխատանքներ ապահովագրական ծածկույթի գնահատման, հիմնական ծառայությունների փաթեթի որոշման, համակարգում ըստ բնակչության առանձին խմբերի ծախսերի որոշման ուղղությամբ: 2019 թվականին հանրային քննարկման է ներկայացվել ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառվել է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է մինչև 2023 թ-ի հունիսի 3-րդ տասնօրյակը մշակել և հաստատել առողջության համապարփակ ապահովագրության կառավարման գործառույթները կանոնակարգող ենթաօրենսդրական փաստաթղթերը, մշակել ՀԻմնադրամի ստեղծման և վերջինիս կողմից իրականացվող գործառույթների ենթաօրենսդրական բազան, 2023թ-ի 2-րդ կիսամյակում առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի ձևավորման համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության Հիմնադրամի ձևավորման հետ կապված օրենսդրական և ենթաօրենսդրական փաթեթի մշակում, հարակից փաստաթղթերի մշակման ընթացքում կառավարման բնագավառի խորհրդատվություն, այդ թվում

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում Հիմնադրամի ձևավորման հետ կապած նորմերի, ձևակերպումների, սահմանումների վերաբերյալ առաջարկությունների տրամադրում:
2. Հիմնադրամի կանոնադրության նախագծի, Հիմնադրամի ստորաբաժանումների կազմի և նրանց աշխատանքային կանոնակարգերի, Հիմնադրամի աշխատակիցների պաշտոնների նկարագրերի, Կառավարման խորհրդի և դրա գործունեությունը կարգավորող փաստաթղթի, խորհրդի անդամների ընտրության և հեռացման կանոնակարգի, Կառավարման խորհրդին կից կոմիտեների ստեղծման և դրանց գործունեությունը կարգավորող փաստաթղթի, կոմիտեների անդամների ընտրության և

հեռացման կանոնակարգի, կոմիտեների կողմից խորհրդատուների ընդգրկման կարգի մշակում և համապատասխան գերատեսչությունների հետ համաձայնեցման աջակցում:

3. Հիմնադրամի ձևավորման, վերջինիս գործառույթների սահմանման դեպքում առողջապահության նախարարության գործառույթների հնարավոր վերանայման, կառուցվածքի փոփոխության վերաբերյալ առաջարկների ներկայացում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Փորձագետի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում Հիմնադրամի ձևավորման հետ կապած նորմերի, ձևակերպումների, սահմանումների վերաբերյալ առաջարկությունների տրամադրում մինչև մարտի 31-ը,
2. Հիմնադրամի կանոնադրության նախագծի, Հիմնադրամի ստորաբաժանումների կազմի, Կառավարման խորհրդի և դրա գործունեությունը կարգավորող փաստաթղթի, խորհրդի անդամների ընտրության և հեռացման կանոնակարգի, Կառավարման խորհրդին կից կոմիտեների ստեղծման և դրանց գործունեությունը կարգավորող փաստաթղթի, կոմիտեների անդամների ընտրության և հեռացման կանոնակարգի, կոմիտեների կողմից խորհրդատուների ընդգրկման կարգի մշակում և համապատասխան գերատեսչությունների հետ համաձայնեցման աջակցում մինչև հուլիսի 30-ը:
3. Հիմնադրամի ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերի, Հիմնադրամի աշխատակիցների պաշտոնների նկարագրերի մշակում, մինչև հուլիսի 31-ը:
4. Հիմնադրամի ձևավորման, վերջինիս գործառույթների սահմանման դեպքում առողջապահության նախարարության գործառույթների հնարավոր վերանայման, կառուցվածքի փոփոխության վերաբերյալ առաջարկների ներկայացում, մինչև հուլիսի 31-ը:
5. Ենթաօրենսդրական փաստաթղթերի աջակցում մինչև հուլիսի 31-ը:

1-ին կետի ներառմամբ հաշվետվությունը և օրենքում այլ օրենքներում ձևակերպումների փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի մարտի 15-ը:

2-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և ենթաօրենսդրական փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հունիսի 15-ը:

3-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը:

4-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը :

5-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը :

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետն ըստ անհրաժեշտության, ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի նախագահի կողմից ներկայացված անհրաժեշտության:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն աշխատանքի նկարագրի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 31.07.2023 թվականը՝ հնարավոր երկարաձգմամբ:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն տնտեսագիտության կամ կառավարման բնագավառում:
- Առնվազն 5 տարվա կառավարման և կազմակերպությունների ղեկավարման փորձառություն,
- Առնվազն 3 տարվա փորձ առողջապահական բարեփոխումների, մասնավորապես կառավարման, ֆինանսավորման, առողջապահական կազմակերպության կառավարման և ռազմավարության մշակման ոլորտում
- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ պետական կառավարման մարմինների հետ աշխատելու կամ պետական կառավարման մարմիններում ղեկավար պաշտոն զբաղեցնելու փորձ

- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, օրենքի, ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման, դրանց մշակման, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: